# «ՍՈՒՐԲ ԽԱՉ».
## ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՆՁԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ՀԵԼՍԻՆԿԻՈՒՄ

1998 թ. նոյեմբերի 11-ից մինչև 1999 թ. հունվարի 24-ը Ֆինլանդիայի մայրաքաղաք Հելսինկիի «Արտ և Դիզայն» թանգարանում կայացավ «Սուրբ Խաչ» խորագրով Հայ Եկեղեցու Գանձերի ցուցահանդեսը, որը նվիրված էր Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700 - ամյակին:

Ցուցահանդեսի բացումը տեղի ունեցավ թանգարանի մեծ դահլիճում, որտեղ ներկա էին Ֆինլանդիայի պետության Կրթության Նախարարության և Արտաքին Գործոց նախարարության ներկայացուցիչներ, Ֆինլանդիայի Լյութերական եկեղեցու Արքեպիսկոպոս Ջոն Վիկստրոմը, Հույն Օրթոդոքս և Կաթոլիկ եկեղեցիների ներկայացուցիչներ և բազմաթիվ հյուրեր: Հայկական կողմից ներկա էին 1700-ամյակի տոնակատարությունների գրասենյակի վարիչ-քարտուղար Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, Ուկրաինայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների տնօրեն հոգեշնորհ Տ. Ներսեհ աբդ. Խալաթյանը, Հայաստանի կառավարությանը կից մշակութային ֆոնդի նախագահ տիար Սրմեն Սմբատյանը, Կրոնի պետական գործոց կոմիտեի նախագահ տիար Պրն. Լազար Սուջյանը և սոցիալական հարցերի կառավարական վարչության պետ տիար Կարեն Հայրապետյանը:

Ցուցահանդեսի բացման օրվանից ի վեր թանգարանը լի էր բազմաթիվ այցելուներով: Նրանցից շատերի հետաքրքրությունը բևեռված էր ոչ միայն բուն ցուցահանդեսում ներկայացված արվեստի գործերի վրա, այլ գլխավորապես նրանք գալիս էին, որպեսզի ճանաչեն Հայաստանը, հայ ժողովրդի մշակույթն ու պատմությունը, ինչպես նաև իմանալու Հայ եկեղեցու առանձնահատկությունները: Այցելուներին նաև գրավում և հուզում էր ցուցադրությանն ուղեկցող հայ եկեղեցական երաժշտությունը, որը հոգևոր ներշնչման և գեղեցկի հետ հաղորդակցվելու հրաշալի միջոց էր այցելուների համար:

Թանգարանում բացված այս ցուցահանդեսն այցելեցին տարբեր պետությունների ներկայացուցիչներ և շատ կազմակերպությունների աշխատակիցներ, այդ թվում՝ Ֆինլանդիայում Ամերիկայի Միացյալ Նահանգների արտակարգ և լիազոր դեսպանը՝ դեսպանատան աշխատակիցներով, ինչպես նաև Ֆինլանդիայում Ռուսաստանի դեսպանատան ներկայացուցիչները:

Հայ եկեղեցու Գանձերի ցուցահանդեսը հետաքրքրություն առաջացրեց ոչ միայն ֆիններին, այլ նաև օտարերկրացիների շրջանում, ովքեր մեծ ոգևորությամբ էին այցելում ցուցահանդես: Այցելուների հետաքրքրությունն էլ ավելի էր կրկնապատկվում, երբ, ցուցահանդեսին զուգահեռ թանգարանի նիստերի սրահում հայ հոգևորականի կողմից հատուկ դասախոսություններ էր տրվում Հայաստանի, Հայ եկեղեցու պատմության և Հայ եկեղեցու խորհրդաբանության վերաբերյալ: Իսկ մեկ այլ սրահում, անընդմեջ, ցուցադրվում էր

Հայաստանին և Հայ Եկեղեցուն նվիրված տեսաֆիլմ, որն իր հերթին նպաստում էր հայ ժողովրդի մշակութային արժեքների և ավանդությունների ճանաչմանը:

«Սուրբ Խաչ» ցուցահանդեսի ընթացքում այցելուների ուշադրությունը առավելապես գրավում էին այնպիսի ցուցանմուշներ, ինչպիսիք են Նոյյան Տապանի, Խոտակերաց Սուրբ Նշանի, Սբ. Հովանու Կարապետի, Սբ. Թադեոս և Սբ. Բարդողիմեոս առաքյալների, ինչպես նաև Սբ. Ստեփաննոս Նախավկայի մասունքները կրող պահարանները: Մեր նպատակներից մեկն էր ներկայացնել ֆինն ժողովրդին Հայ եկեղեցու և Հայ ժողովրդի արվեստի բնագավառում ունեցած նվաճումները և հոգևոր գանձերը:

Ուրախությամբ պետք է նշենք, որ Ֆինլանդիայի հայ համայնքը ակտիվ մասնակցություն բերեց ցուցահանդեսին, այն մեծապես նպաստեց ֆիննահայության հոգևոր վերելքին: Ցուցահանդեսի ընթացքում հնարավորություն ստեղծվեց մոտիկից ծանոթանալու ֆիննահայության կյանքին, նրանց ձեռքբերումներին և դժվարություններին:

Ֆիննահայերը, որոնց թիվը Ֆինլանդիայում հասնում է մոտ քառասուն – քառասունհինգ ընտանիքի, համարվում են նոր կազմավորվող գաղութ, ովքեր գլխավորապես կենտրոնացված են Հելսինկի, Տամպերե, Տուրկու և Հյուվինկա քաղաքներում: Ասենք նաև, որ հայ հոգևորականի բացակայությունը մեծապես դժվարացնում է ֆիննահայերի հայապահպանության գործը, թեպետ երբեմն տեղի են ունենում զանազան հավաքույթներ, որոնք նպաստում են միմյանց ճանաչելուն և հայկական ոգու և գիտակցության պահպանմանը: Ցուցահանդեսի ընթացքում հայ համայնքի համար տեղի ունեցավ ևս մեկ ուրախալի իրադարձություն: Հույն Օրթոդոքս եկեղեցում մեր կողմից տեղի ունեցավ չորս ֆիննահայերի մկրտության ոգելից արարողությունը, և ապա կատարվեցին երեկոյան ու խաղաղական ժամերգություններ՝ աղոթքի և խոկման հրաշալի պահեր պարգևելով տեղի հայությանը:

Հելսինկիում կայացած Հայ եկեղեցու գանձերի ցուցահանդեսը հրաշալի առիթ էր՝ ցույց տալու հայ ժողովրդի պատմա-մշակութային և հոգևոր ձեռքբերումները: 1700 - ամյակին նվիրված այս ցուցահանդեսը մեկ անգամ ևս ընդգծում էր հայ ժողովրդի հնագույն քրիստոնյա ազգ լինելը՝ իր հարուստ քրիստոնեական ավանդություններով ու հոգևոր մշակույթով:

***Տ. ՆԵՐՍԵՀ ԱԲԵՂԱ ԽԱԼԱԹՅԱՆ***